

Յարտագիլ մայթի , նարաւո զուման , Ասմարանցի մասնաշ , Բամբուռու Կըմեն
ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ԳԵՐՇ. Տ. ԲԱԲՔԵՆ ԱՐՔԵՊՈՄ. ԱՊԱՏԵԱՆԻ

Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը իոր սուզի մատնուեցաւ անահետ վախճանումովը Հարաւային Ամերիկայի Հայրապետական Պատուիրակ Գերշ. Տ. Բաբքէն Արքեպոս . Ապատեանի : Գերաշնորհ Սրբազնին կկանքին թելը կը կտրուէր սրտի տաղնապի մը հետեւանքով , Մոնթէլիտաէոյի մէջ , Ապրիլ 24-ի երեկոյեան , երբ արդէն նախազահեր էր Ապրիլեան Եղեռնի ողեակոչումի հանդիսութիւններուն եւ ըրեր իր յարգանքի խօսքը :

Հանդուցեալ Սրբազնը ծնած էր Հայէպ , 1917-ին : Ծննդավարին Ազգային ինչպէս նաև Այնթապի Կրթասիրաց վարժարաններուն մէջ սուանուէ ետք իր նախակրթարանային ուսումը , 1932-ին բնկունուած էր Երուսաղէմի Հայ Պատրիարքութեան Ժառանգաւորաց Վարժարանը եւ Ընծայարանը : Հոն սուացած էր բարձրագոյն ուսումը , իրեն ուսուցիչներ ունենալով Երջուկ . Տ. Թորդոմ Պատրիարք Գուշակեանը , Ս. Աթոռիս Գահակալ Ն. Ամեն . Տ. Եղիշէ Արքեպոս . Տէրտէքեանը , Եւրոպայի Հայոց Հայրապետական Պատուիրակ Գերշ. Տ. Եկերորդ Արքեպոս . Մանուկեանը , Յակոբ Օշականը , Շահան Պէրսէքեանը եւ ուրիշներ :

1939-ին , աւարտելով իր ուսումը , Երջուկ . Տ. Մեսրոպ Պատրիարք Նշանեանի ձեռամբ կուսակրօն քահանայ ձեռնադրուած էր վեց բնկերներու Հետ :

Ձեռնադրութենէն Ետք մինչեւ 1945 զանազան վարչական պաշտօնաներ վարած էր Ս. Յակոբեանց վանքէն ներս . նոյն տարին նշանակուած էր Էտֆայի վանքին տեսուչ եւ Համայնքին հովիլ , միաժամանակ ստանձնելով տեղւոյն Ս. Գլխադիր ազգային վարժարանին անօրէնութիւնը : Մեծ ձեռնհասութեամբ եւ պատասխանատուութեան խորդիտակցութեամբ վարած էր այս պաշտօնները , մանաւանդ 1947-էն ծայր տուած Արքաթորայէլեան պատերադմի շփոթ ու դժուար օրերուն :

1959-ին հպիտակոպոս ձեռնադրուած էր Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգէն Ա. Վեհափառ Կաթողիկոսէն եւ նշանակուած Հարաւային Ամերիկայի Հայրապետական Պատուիրակ : Հաստատուելով Պուէնոս Այրէս , Հանդուցեալ Սրբազնը մինչեւ իր անժամանակ վախճանումը , մօտ քասն տարի խոհեմօրէն եւ իր մասսութեամբ հովուած էր իրեն վատահուած ընդարձակ թեմը :

Գերշ. Տ. Բաբքէն Արքեպոս . Ապատեանի վախճանումով , Ս. Յակոբեանց Միաբանութիւնն ու Հայաստանեայց Եկեղեցին կը կորսնցնեն նուիրուած Եկեղեցական մը եւ ազգասէր հովիլ մը , պատրաստուած մտաւորական մը եւ քաղցրազայն անձնատորութիւն մը :